

## ԲՆԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՃՇՏՈՒՄ՝ ԵԶԵԿԻԷԼԻ ԳՐՔԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հին եւ Նոր Կտակարանների հայերէն թարգմանութեան որոշ մասեր վէճերի առարկայ են եղել բնագրական առումով: Ինչպէս երեւում է՝ այդպիսի մասերից է նաեւ Եզեկիէլի մարգարէութեան Ի՛.9 տնահամարը, որը հետեւեալն է. Ծերբն մատենագէտն է իմաստունն ևնցա որ էին ի քեզ, ևնֆա գաւրացուցանէին զխորհուրդս քո:

Շաւարշ Նարդուհին էր եղել այս հարցի յարուցողը տարիներ առաջ, 1960 թ., մեր «Հայկական մատենագիտութիւն» աշխատութեան Ա. հատորին նուիրած իր գրախօսականում<sup>1</sup>: Առիթը՝ մեր հատորի ներածութեան հետեւեալ հատուածն էր.

«Մատենագիտութիւնն բառը նշանակում է մատենանների գիտութիւնն եւ կազմուած է մատենագէտ բառից, որը Ե. դարից է գալիս: Հայկազեան բառարանների բացատրութեամբ՝ մատենագէտ նշանակում է գիտակ եւ հմուտ մատենից, կամ՝ գիտակ մատենից եւ դպրութեանց. եւ իրօք այդ նշանակութեամբ էլ գործածուած է Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան մէջ (Եզեկ.Ի՛.9)»<sup>2</sup>:

Նարդուհին գտնում էր, որ Եզեկիէլից բերուած այս վկայութիւնը «սխալ է ընտրուած», որովհետեւ հայերէն Եզեկիէլում մատենագէտ

բառն ինքնին թիւրիմացութիւնն է, քանի որ նրա երրայական բնագիրը նոյն տեղում ունի փիւնիկեան Գեբաղ քաղաքի անունը, իսկ յունարէն բնագիրը՝ Բիբլոս, որը Գեբաղի հելլենական անունն է: Եւ ապա՝ հաշուի առնելով, որ հայ թարգմանիչը յունարէնից էր կատարել իր թարգմանութիւնը, Նարդուհին ճշտում էր կատարում Բիբլոս անուան մասին. «Գալով Բիբլոս անուան, պէտք է գիտնալ, թէ ոչ մէկ կապ ունի բիբլոս բառին հետ, յունարէն մատեան կամ գիրք»:

Շ. Նարդուհու համար սա էր իր յարուցած հարցի յենարանը, որտեղից մեկնելով՝ նա տալիս էր իր եզրակացութիւնը, թէ «հայ թարգմանիչը մատենագէտ բառն է դրեր հոն՝ ուր բնագիրը կը դնէ...քաղաքի մը անունը», «հայերէն Աստուածաշունչ մատեանին թարգմանիչը, մեր սքանչելի հայագէտը, օտար լեզուի մէջ տկար թերեւս, Բիբլոս քաղաքին անունը կրող Բիբլացիքը թարգմաններ է...մատենագէտն», «կարդալով Բիբլոսի ծերերը յունարէն բացատրութիւնը, թարգմանած է մատենագէտ ծերերը»:

Ըստ այսմ՝ Եզեկիէլի հայերէն բնագրում գոյութիւն ունէր վրիպում, որի մեղքը ամբողջութեամբ ծանրանում էր Ե. դարի հայ թարգմանիչի ուսերին, իսկ վերջինիս գոհերն էին դարձել, հետագայում, Հայկազեան բառարանների հեղինակներն ու, աւելի ուշ, «Հայկական մատենագիտութեան» հեղինակը:

Նախ ասենք, որ մատենագիտութիւնն բառի ստուգաբանութիւնը հիմնաւորելու համար Եզեկիէլի գրքի հայերէն թարգմանութիւնից բերուած վկայութիւնը չէր կարող սասանուել եւ արժեգրուել Նարդուհու այդ ղիտողութեամբ, քանի որ տուեալ դէպքում մեզ համար էականը միայն մատենագէտ բառի գոյութեան փաստն էր Ե. դրում: Ենթադրենք կամ ընդունենք, որ հայ թարգմանիչը սխալ էր հասկացել Եզեկիէլի նախադասութեան այդ մասը. բայց կարեւորն

<sup>1</sup> Տես Շաւարշ Նարդուհի, «Մատենագիտութիւն Անասեանի», Յատաջ, Փարիզ, 1960, No. No. 8711, 8717, 8723, 8729, 8741, 8747 եւ 8753: Մեր խնդրի մասին խօսուում է այս գրախօսականի Բ, Գ եւ Դ մասերում:  
<sup>2</sup> Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Ա, Երեւան, 1959, էջ V: Հմմտ. «Բազմաբնակ հայկազեան լեզուի...արարեալ ի Միսիթարայ վարդապետէ Սեբաստացուց՝ արբայ հայր կոչեցել ոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց», հտ. Ա, Վենետիկ, 1749, էջ 619: «Նոր բազմաբնակ հայկազեան լեզուի, երկասիրութիւն երկից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Միսիթարայ արբա-հօր...», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 213:

այդ չէր, այլ՝ այն, որ նա իր հասկացած եւ պատկերացրած իմաստը արտայայտելու համար գործածել էր արդէն ծանօթ եւ կամ իր կողմից կերտուած մատենագէտ բառը: Նշանակում է՝ այդ բառը, իրօք, Ե. դարից էր: Հետեւաբար՝ ոչ Հայկազեան բառարանների հեղինակները, ոչ էլ «Հայկական մատենագիտութեան» հեղինակը զոհ չէին գնացել որեւէ թիւրիմացութեան:

Այս պարզաբանումով՝ Ե. Նարդուհու արծարծած հարցի ոլորտից դուրս է ընկնում մատենագիտութիւնն բառի ստուգաբանութեան հետ կապուած մասը եւ տարակուսանքի առարկայ է մնում միայն Եղեկիէլի գրքի տուեալ հատուածի ճշգրտութեան խնդիրը:

Ե. Նարդուհին իրաւացի էր անշուշտ, երբ դիտել էր տալիս Եղեկիէլի գրքի հայերէն թարգմանութեան եւ նրա յունարէն բնագրի միջեւ եղած այդ տարբերութիւնը: Սակայն՝ երեւոյթի բացատրութիւնը տալու նպատակով նրա առաջ բերած լեզուաբանական, դիցաբանական, պատմական, հնախօսական եւ այլ կարգի ընդարձակ տուեալները, վերաբերելով Հին Կտակարանի լոկ երապական եւ յունական բնագրերի հետ կապուած ներքին հարցերին (Գեբալ-Բիբլոս, «Ժեր» բառի նշանակութիւնների ճշտումը, եւ այլն), ի վիճակի չէին՝ ցոյց տալ տեղի ունեցած վրիպման ուղին: Չէր երեւում, որ Նարդուհին ուղղակի ձեռնամուխ եղած լինէր յունարէն բնագրի քննական հարցերին եւ օգտագործած՝ նրան վերաբերող աղբիւրագիտական տուեալներ: Որովհետեւ՝ այդպիսի դէպքում ակնկալելի էր, որ նա հետազօտէր յունարէն Եօթանասնիցին վերաբերող բնագրաբանական խնդիրները եւ ոչ թէ հարեւանցիորէն առաջ բերէր նրա սոսկ պաշտօնական ընկալեալ ընթերցումը. պէտք է ասէր, թէ այնտեղ եւս կա՞նք արդեօք լեզուական առումով տարբերութիւններ կամ անորոշութիւններ կամ շփոթութիւն առաջացնող երեւոյթներ, եւ եթէ կան՝ արդեօք ի՞նչ բնոյթի են դրանք, եւ այլն: Իսկ դրանից յետոյ՝ Նարդուհին պիտի կարողանար նոր միայն ասել, թէ հայերէն թարգմանութեան մէջ նկատուող տարբերութիւնը կապ ունի եւ կամ չունի յունարէն ձեռագրերում գոյութիւն ունեցող անորոշութիւնների հետ: Կարծում ենք, որ եթէ նա դիմած լինէր վերոյիշեալ մեթոդի օգնութեանը, հաւանաբար ստիպուած կը լինէր

հինգ յունարէն բնագրի հասցէին ուղղել իր քննադատութեան ամենակարեւոր բաժինը: Իսկ մենք՝ այդ է, որ փորձում ենք անել այստեղ համաօտակիր:

Եղեկ. ԻԷ. 9 տնահամարը հետեւեալ պատկերն է ներկայացնում յունարէն Եօթանասնից բնագրում.

Οἱ πρεσβύτεροι Βυβλίων καὶ οἱ σοφοὶ αὐτῶν ἦσαν ἐν σοί, οὗτοι ἐνίσχουον τὴν βουλήν σου (Ἐπρῖν Բիբլացուց եւ իմաստունք անցա որ էին ի քեզ, նոքա գաւրացուցանէին զխորհուրդս քո):

Յունական գրչագրական աշխարհը միաձայնօրէն այսպէս տալով նախադասութեան քերականական պատկերը՝ տատանում է ցոյց տալիս միայն մեզ համար կական եղող բառի ուղղագրական տարբերակման մէջ՝ βυβλίων եւ βιβλίων.

Նկատելի է, որ այս տատանումը գոյութիւն է ունեցել Եօթանասնիցի նոյնիսկ այն գրչագրերում, որոնք ժամանակով հնագոյններն են: Բաւական է յիշել նրանցից միայն երեքը, որոնք բանասիրական գրականութեան մէջ արդէն շատ յայտնի են իրենց իւրայատուկ անուանումներով: Ամենահինը՝ Codex Vaticanus-ը<sup>5</sup>, որը Դ. դարից է, տալիս է βυβλίων. Codex Alexandrinus-ը<sup>6</sup>, որը 2. դարից է, տալիս է βιβλίων. Իսկ Codex Marchalianus-ը<sup>7</sup>, որը նոյնպէս 2. դարից է, ուղղումներ ցոյց տուող նշումների միջոցով ունի թէ՛ βυβλίων, թէ՛ βιβλίων.

Եօթանասնից բնագրի կարեւոր հրատարակութիւններ կատարած բանասէրներ, ինչպիսիք

<sup>5</sup> Հոմ, Վատիկանի Մատենադարան, Վատիկանեան Փոնդի յուն. ձեռագիր No. 1209: Այս թանկագին գրչագիրը նմանատպութեամբ հրատարակուած է. *Bibliorum Sacrorum Graecus Codex Vaticanus auspice Pio IX. Pontifice Maximo collatis studiis Caroli Vercellone Sodalis Barnabiteae et Josephi Cozza Monachi Basiliani editus. Carolum Vercellone excepit Caetanum Sergio Barnabites*, vol. I-VI, Romae, 1868-1881.

<sup>6</sup> Լոնդոն, Բրիտանական Թանգարան, Royal Mss. 1 D.

<sup>7</sup> Հոմ, Վատիկանի Մատենադարան, Վատիկանեան Փոնդի յուն. ձեռագիր No. 2125:

սին են, օրինակ, H. B. Swete-ը<sup>6</sup>, A. Rahlfs-ը<sup>7</sup> եւ J. Ziegler-ը<sup>8</sup>, նախապատուութիւնը տուել են βυβλίων տարբերակին. մինչ J. E. Grabe-ի<sup>9</sup>, C. Tischendorf-ի<sup>10</sup> հրատարակութիւններում եւ ուրիշ շատերում պահուած է βιβλίων-ը:

Այս երկու տարբերակների մրցակցութեան հարցում կարելի է, ի հարկէ, համոզուած լինել, որ որոգիներն Վեցիջեանի վկայութիւնը կը լինէր ի նպաստ առաջինի, եթէ նկատի ունենանք, որ խօսքը վերաբերում է Βύβλος (Բիբլոս) քաղաքի բնակիչներին՝ բիբլացիներին: Բայց, դժբախտաբար, մենք զրկուած ենք այդ անմիջական վկայութիւնից, քանի որ Եղեկ. ԻԷ. 9 համարին վերաբերող տուեալները գտնուում էին Վեցիջեանի այն մասերում, որոնք կորած են, ինչպէս ցոյց է տալիս B. de Montfaucon-ի կատարած հրատարակութիւնը<sup>11</sup>. Իսկ F. Field-ի հրատարակութիւնը թէեւ ունի այդ անունը եւ դնում է βιβλίων ձեւով<sup>12</sup>, բայց պէտք է իմանալ, որ այդ լրացումը հիմնուած է Թ. եւ Ժ. դարերին

<sup>6</sup> *The Old Testament in greek according to the Septuagint*, edited for the Syndics of the University Press by Henry Barclay Swete, vol. III, Cambridge, 1930, p. 44.

<sup>7</sup> *Septuaginta, id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes edidit Aifred Rahlfs*, vol. II, Stuttgart, [1935], p. 817.

<sup>8</sup> *Septuaginta. Vetus Testamentum graecum, auctoritate Societatis Litterarum Göttingensis editum*. Vol. XVI pars 1: Ezechiel, edidit Joseph Ziegler, Göttingen, 1952, p. 214.

<sup>9</sup> *Vetus Testamentum ex versione Septuaginta interpretum. Olim ad fidem Codicis Ms. Alexandrini. Summo studio et incredibili diligentia expressum, emendatum ac suppletum a Joanne Ernesto Grabe S.T.P., nunc vero exemplaris Vaticani aliorumque Mss. codd. lectionibus var. nec non criticis dissertationibus illustratum, insigniterque locupletatum*, t. III, Tiguri Helveticorum, 1732, p. 355.

<sup>10</sup> *Vetus Testamentum graece iuxta LXX interpretes...textum vaticanum romanum emendatius edidit...Constantinus Tischendorf*, editio sexta, t. II, Lipsiae, 1880, p. 448.

<sup>11</sup> Հմմտ. PG (Patrologiae cursus completus, series graeca), t. XVI-3, Parisii-Turnholti, pp. 2559-2562.

<sup>12</sup> *Origenis Hexaplorum quae supersunt...auctit Fridericus Field*, t. II, Hildesheim, 1964, p. 841.

պատկանող կողմնակի աղբիւրների վրայ<sup>15</sup>, որոնք հեղինակութիւն չեն այս հարցում:

Մեր ասելիքն այն է, որ, եթէ Եղեկ. ԻԷ. 9 տնահամարի հայերէն թարգմանութեան մէջ նկատուում է վրիպում, ապա դրա պատճառը պէտք է առաջին հերթին որոնուի յունարէն սկզբնագրի ներկայացրած անորոշութիւնների միջավայրում:

Արդարեւ՝ բանը նրանում է, որ βυβλίων եւ βιβλίων բառաձեւերը քերականօրէն կարող էին լինել ինչպէս միեւնոյն բառի ուղղագրական տարբերակները, այնպէս եւ լինել բոլորովին տարբեր բառերի ներկայացուցիչներ:

Փիւնիկէի այն քաղաքը, որը Եղեկիէլի երապական բնագրում յիշատակուում է Gebal (Գեբալ) անունով, հելլենների մօտ անուանուում էր Βύβλος (Բիբլոս), այսպէս՝ Ս-ով. Իսկ դրանից՝ βύβλιος (բիբլացի) եւ βύβλιοι (բիբլացիք), յոգն. սեռ. βυβλίον<sup>14</sup>: Այս անուն-բառի կենսագրութիւնը մեզ ասում է, որ նրա առաջին վանկի Ս հնչիւնը Ն-ի հետ չէր շփոթուել հելլենական գրականութեան մէջ<sup>15</sup>, չնորհիւ, անշուշտ, այն բանի, որ երկու հնչիւններն իրարից որոշակիօրէն տարբերուում էին այդ շրջանում եւ այդպէս էլ կը լինէր նաեւ Որոգիներ Աղեքսանդրացու օրերում (Գ. դար): Բիբլացիական շրջանին է յատուկ այդ եւ մի քանի այլ հնչիւնների իրար հետ շփոթումը, ի հետեւանս որի՝ ձեռագրեր ընդօրինակողները, որոնք մի ուրիշ բարձրաձայն

<sup>15</sup> Դրանք են՝ յուն. Եօթանասնից բնագրի Cod. Barberinus եւ Cod. Chisianus անուններով յայտնի օրինակները, որոնց տուեալների առաջերման համար F. Field-ը օգտագործել է հետեւեալ հրատարակութիւնը. *Iezeciel secundum Septuaginta, ex Tetrallis Origenis e singulari Chisiano codice annorum circiter 120000. Opera et studio R. D. Vincentii De Regibus, olim linguae sanctae in Vaticana Bibliotheca interpretis et graecae professoris, nunc primum editus Vincenzo Bugarini sacerdoti romani*, Romae, 1840, p. 203.

<sup>14</sup> Բ. խոնարհմանը ենթարկուող գոյական է, ինչպէս են հետեւեալները. Σιδώνιος (Սիդոնացի) - Σιδώνιοι-Σιδωνίων եւ Τύριος (Տիրացի) - Τύριοι - Τυρίων.

<sup>15</sup> Հմմտ. *Thesaurus graecae linguae, ab Henrico Stefano constructus...*, vol. II, Parisiis, 1833, p. 451.



խիթարի եւ աշակերտների բառարաններում հայ. մատենագիտութեան տրուած գիտակ եւ հմուտ մատենից կամ գիտակ մատենից եւ դպրութեանց բացատրութիւնը՝ այդ բառի բաղադրամասերի վրայ հիմնուած լոկ ձեւական ստուգաբանութիւն չէր, այլ վկայուած էր A. Vitré-ի հրատարակութեամբ արաբերէնին կըցուած լատիներէն թարգմանութեան մէջ որպէս որոշիչ դրուած peritus (յոգն. periti) բառով, որը նշանակում է գիտակ, գիտուն, հմուտ, իրագրեկ, ձեռնհաս:

Եզրակացութիւն.

Եզեկիէլի մարգարէութիւնը մէկն էր Հին Կտակարանի գրքերի յունարէն Եօթանասնից բնագրի այն հաստատուն, ճշմարիտ եւ ստոյգ օրինակներից, որոնք Բիւզանդիայից Հայաստան էին բերուել Ե. դարում, Եփեսոսի տիեզերական ժողովից (431 թ.) անմիջապէս

յետոյ, ինչպէս աւանդում են հայ մատենագրական աղբիւրները<sup>27</sup>: Այդ օրինակն ապահովաբար ունէր βιβλίον ոչ-ընտիր ընթերցումը, որը, լինելով βιβλίον (մատեան) բառի յոգն. սեռ. հոլովը, շատ բնական ուղիով մոլորեցրել է հայ թարգմանչին, ինչպէս մոլորեցրել է եւ արաբ թարգմանչին: Դրա փոխարէն՝ այս մոլորական թարգմանութիւնն իր բովանդակած մատենագիտ բառով ապացուցում է, որ հայերէն մատենագիտ տերմինն արդէն գոյութիւն ունէր Ե. դարում եւ կամ՝ ստեղծուել է նոյնինքն թարգմանչի կողմից:

Հովիտուդ, յունիս 1984 թ.

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

<sup>27</sup> Հմմտ. Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Բ, էջ 309-318:

## LE «SCEAU DE LA FOI»: UNE LACUNE EN PARTIE COMBLÉE

L'unique manuscrit ancien du *Sceau de la Foi*, florilège dogmatique de l'Église Arménienne compilé au cours du VII<sup>e</sup> siècle dans un but antichalcédonien<sup>2</sup>, possédait deux lacunes<sup>3</sup>. L'édition de l'évêque Karapet Tēr-Mkrtč'ean les fait apparaître clairement: l'une se situant après le folio 252 (le folio suivant sera le folio 257) a retranché la conclusion de la neuvième section du florilège et la dixième en entier<sup>4</sup>; l'autre, après le folio 148 (le folio suivant sera le folio 154), a entraîné la disparition de la finale de la troisième section et du début de la quatrième<sup>5</sup> dont le titre, transcrit en tête du manuscrit, a été opportunément conservé:

«Que le Fils de Dieu a réellement été circoncis après s'être incarné, et que l'on ne doit pas dire du fait de la circoncision, de la manducation, du boire et de la passion, que le corps du Christ est corruptible<sup>6</sup>.»

C'est à une partie de cette seconde lacune, le titre de la quatrième section et les textes qui devaient l'accompagner dans le manuscrit de Darašamb, que deux manuscrits du Couvent Saint-Jacques de Jérusalem peuvent éventuellement obvier.

### Deux manuscrits du Couvent Saint-Jacques de Jérusalem

Les manuscrits *Jérusalem 1a* (de 1417) et *154a* (de 1737)<sup>7</sup> sont des čařantir, homéliaires composés sur la base du čařoc' (typicon- lectionnaire)<sup>8</sup> et destinés à offrir des lectures patristiques ou historiques pour l'Office divin des différentes célébrations de l'année liturgique<sup>9</sup>. Parmi les textes prévus pour le huitième jour de l'Épiphanie, jour où se célèbre la mémoire de la circoncision du Christ, on lit le lemme suivant:

<sup>1</sup> Pour le titre complet de ce florilège, voir G. Garitte, *Documents pour l'étude du Livre d'Agathange (Studi e Testi 127)*, Rome, 1946, p. 354. Nous citerons l'ouvrage sous le sigle Tēr-Mkrtč'ean, *Sceau*.

<sup>2</sup> Cf. H. Jordan, *Armenische Irenäusfragmente mit deutscher Übersetzung nach Dr. W. Lüdtké (Texte und Untersuchungen 36)*, Leipzig, 1913, p. 108-120; G. Garitte, *La Narratio de rebus Armeniae (Corpus Scriptorum Christianorum Orientalium 132)*, Louvain, 1952, p. 277. L'ouvrage qui possède des fragments de Jean Mayragomec'i, mort en 667-668, est donc postérieur aux années du catholicossat de Komitas (611-628) durant lesquelles il aurait été compilé.

<sup>3</sup> Ce manuscrit (en partie du XIII<sup>e</sup> s.), découvert en 1911 par l'évêque Karapet au Couvent Saint-Étienne de Darašamb, sur l'Arak's, non loin de l'ancienne Juła (cf. H. Oskean, *Vaspurakan-Vani vank'erə, t. 2 [Azgayin Matenadaran 151]*, Vienne, 1942, p. 527-570), n'a jamais été retrouvé. Les deux copies du Couvent Surb-Amenap'rkič' de Neu-Djouf, les n<sup>os</sup> 159 et 298 du XVII<sup>e</sup> s. (n<sup>os</sup> 410 et 462 du catalogue de S. Tēr-Awetisean, Vienne, 1970, p. 613-619 et 725-726), possèdent bien, nous l'avons constaté de visu, les mêmes lacunes.

<sup>4</sup> Cf. Tēr-Mkrtč'ean, *Sceau*, p. 371. La lacune se situe bien ici, et non p. 341, comme semble l'indiquer la table de Tēr-Mkrtč'ean (*ibid.*, p. CXXVII), sans doute parce que le fragment de cette page 341 (եթէ չէ խառն...) mis sous le nom de Sévérien de Gabala n'est pas de cet auteur en réalité (cf. J. Lebon, *Les citations patristiques grecques du «Sceau de la Foi»*, dans *Revue d'Histoire Ecclésiastique*, t. 25, 1929, p. 28). - Le titre de la dixième section, conservé en tête du manuscrit (cf. Tēr-Mkrtč'ean, *Sceau*, p. 1), n'apparaît pas dans le texte; la section entière a donc disparu.

<sup>5</sup> Cf. Tēr-Mkrtč'ean, *Sceau*, p. 248.

<sup>6</sup> *Ibid.*, p. 1.

<sup>7</sup> Cf. N. Połarean, *Mayr c'uc'ak jeřagrac' Srboc' Yakobeanc', tome 1<sup>er</sup>*, Jérusalem, 1966, p. 1-42 et 429-466.

<sup>8</sup> Tous deux s'ouvrent avec une rubrique annonçant la vigile de l'Épiphanie, le 5 janvier, pour laquelle des lectures patristiques ont été choisies; viennent ensuite les rubriques et les textes choisis pour le jour même de l'Épiphanie, son octave et chacune des célébrations du čařoc' durant l'année liturgique.

<sup>9</sup> Voir notre communication au Symposium sur *La Littérature Arménienne Ancienne et Médiévale* (Erévan 14-20 septembre 1986: *Čařoc' et Tōnakan arméniens*, dans *Ecclesia Orans* 4 (1987), p. 169-201.